

## ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒԽԵՔ.

Ը Գ Ո Ւ Կ Ա.

Ա. Ինչքն ելած է արգեօք այն առակը որ կըսէ թէ «Բարեկամիդ տունը մազերդ կըտրէ», չարկամիդ տունը ըղունկըդ կտրէ»։ (տաճկերէն, տուր հվինտէ սաξ բարա, տիւշման հվինտէ ղղոնագ ժկա)։ — Եթէ մեր ռամիկներուն հարցընեմք, կըսեն թէ պատճառը այս է որ բարեկամի տունը ըղունկ կտրելը թշնամութիւն կձգէ, իսկ մազ կտրելը աղէկ է։ Բայց այս պատճառ չէ, այլ ասոր ալ պատճառն է մեր վինառածը։ Մազն ալ ըղունկն ալ մարդուս այն կտրեներն են որ վայելչութեան կոմ մաքրութեան համար կիրտրուխն. ուրեմն ինչ բարոյական նշանակութիւն կրնան ունենալ աղէկ կամ գէշ։

Մեզի կերեւի թէ ընդհանրապէս ուրիշի առջեւ ըղունկ կտրելը, եւս առաւել ուրիշի տունը, անքաղաքավար եւ անվայելուչ գործողութիւն է։ ուստի ոչ բարեկամի տունը պէտք է ըղունկ կտրել, եւ ոչ չարկամի՝ այսինքն թշնամւոյ։ Բայց որովհետեւ ըղունկը նաեւ ճանկելու ճանկը ռատութելու գործիք է, ասկից առիթ առեր են ռամիկները կարծելու թէ ըղունկը բարեկամի տուն ձգողը՝ այն տեղը կռիւ կձգէ։ Ընդհակառակն՝ գուցէ այնչափ անաեզի չէր լինէր ըսելը որ ըղունկը թէ թշնամւոյ եւ թէ բարեկամի տուն կտրողը՝ կռիւ ընելու գիտաւորութենէն ետ կենալուն նշան մը կրնայ համարիլ այն գործողութիւնը։

Իսկ թէ մազը բարեկամի տունը կտրելն աղէկ քան է՝ այն ալ խելքի յարմար չերեւիր, որովհետեւ մազի կտրաւուքներն ալ գետինը թափիթը բաւական անմաքրութիւն ու անքաղաքավարութիւն է։ Ուրիշ բան է՝ եթէ մէկը իւր մազին մէկ կտրորը բարեկամին տայ իբրեւ յիշատակ, ինչպէս որ կընեն սմանք, վասն զի այդպիսի գիտաւորութիւն

ունեցողին համար արգելք մը չկայ որ նաեւ ըղունկը թողու բարեկամին յիշատակ։

Բ. Կրնայ մէկը հարցընէլ թէ ըղունկները երկայն ձգելն աղէկ է — ինչպէս որ Անգղիացիք ետքի տարիներս սկսան ընել, եւ ուրիշ շատ եւրոպացիք անոնց հետեւցան ու կհետեւխն։ Մեզի կերեւի թէ նախ այդքանը ըղունկին տիրոջը գիտնալու բանն է, ուզել կիրարէ, ուզել երկայն կձգէ։ Երկրորդ, երկայն ձգողը եթէ չուզեր անոլ կերպով մը կատուի նմանութիւն ունենալ, պէտք է զգուշանայ որ մէկը մէկալը չճանկէ։ Եւ եթէ չուզեր զուրիշները զզուեցընել՝ պիտի նայի որ երկայն երկայն թողուցած ըղունկներուն տակը բակլայի պէխերուն պէս մատմատ աղտեր չկապեն։ Բայց շատ կխաբուի այն մարդն որ միտքը գնէ թէ ըղունկը երկայն ձգելը աւելի իմաստութեան նշան է քան թեթեւամտութեան, կամ թէ ըղունկները կտրելը աւելի կոպտութեան նշան է քան թէ բարակութեան . . .

Գ. Ըղունկները կրծելը գէշ է։ — Ինչո՞ւ համար. — մէկ մը որ տեսնողին զզուանք կըերէ, մէկմ' ալ որ մարդուս մատուըներուն տգեղութիւն՝ տձեւութիւն ու վնաս կուտայ։ — Ռամիկները կըսեն թէ ըղունկը կրծողը բարակ ցաւ կըլլայ. բայց այս վախը անհիմն քան կերեւի մեզի, որովհետեւ ըղունկ կրծելը բարակ ցաւին հետ յարմարութիւն մը չունի, եւ շատ մարդիկ տեսած եմք այդ անվայել սովորութեան տէր՝ որ բարակ ցաւէ աղատ են։ Իսկ եթէ տղայոց սիրաը այն սովորութենէն վախ մը ձգելու համար կըսեն այդ խօսքը, վնաս չունի։

Դ. Ըղունկի վրայ կոխող անցնող աղջկան բաղդը (խըամիրը) կփակուի եօթը տարի։ — Ինչո՞ւ ըսես նէ՝ եյ իշրէ կըսեն։ Բայց պատ-

ճառը այս կերեւի որ աղջկան պարագերէն մէկը լինելով աչքաբացութիւն, մաքրասիրութիւն ու աշխատասիրութիւն, երբ որ ոտքին տակը ըղունկի կտորուանք հանդիպին ու ինքը կամ թմրածութենէն, կամ անհոգութենէն եւ կամ ծուլութենէն՝ անփոյթ լինի աւլելու կամ վերցընելու, հարկաւ ուրիշ բաներու մէջ եւս յայտնի կընէ այդ իւր մեծամեծ պակասութիւնները, եւ տունը կմնայ՝ ոչ միայն եօթը տարի, այլ եւ գուցէ բռլոր կենացը մէջ :

Ե. Ըղունկը այրելը գէշ է կըսեն: Ի հարկէ, գէշ գէշ հոտեր կհանէ, անոր համար պէտք չէ այրել: — Բայց սարսափելի անգիտութիւն ու անիրաւ բան չէ սամկաց հանած հետեւանքը, որ կըսեն թէ ըղունկը այրող մարդուն ըղունկները անտեն (այսինքն ի հանդերձեալն) կապահանջին, ու թէ որ չգտնուի՝ ըղունկին տիրոջը կէրեն:

Զ. Կտրուած ըղունկներն ինչ ընելու է: — Պատի տակ թաղելու է: — Ինչու համար: — Մեր գիտցածը, անոր համար ոտքի տակ չերթան ու քալողին նեղութիւն չտան, զզուանք չպատճառեն: Խակ ուամիկները կարծեն թէ գատաստանին օրը մարդուս ըղունկները պիտի ուզուին, անպատճառ գտնելու է: Այս անտանելի գժուարութենէն ու տագ-

նապէն աղաւ մնալու համար՝ պէտք է յիշէ քրիստոնեան որ գատաստանին օրը մարդէս պահանջուելիքները իրեն բարի կամ չար գործքերն են, եւ ոչ թէ մաղերն ու ըղունկները:

Է. Ըղունկին վրայ նորիկ (այսինքն ճերմակը բիծ) ունենալը ինչ բանի նշան է: — Մեր ուամիկները կըսեն թէ նորիկը նշան է նոր հագուստ հագնելու. բայց նրչափ տղայք եւ աղքատներ կան որ տարին տասը նորիկի կունենան ու մէկ նոր հագուստ մը չեն հագնիր: Ուրեմն նորիկը նշան մը չէ, այլ ըղունկի ոսկորին կազմուածքին մէջ գիտուածական փոփոխութիւն:

Ը. Իրաւ է այն խօսքն որ կըսեն թէ որուն որ ըղունկը մոխն մօտիկ ու կպած է, անոր ազգականի սէրը շատ կլինի: — Այս բնախօսական կամ խտրագիմական նշանը ստուգելու համար շատ գիտուածութիւն հարկաւոր է, զոր մեք չեմք ըրած, եւ ուրիշներուն կթողումք: Միայն թէ անհիմն չէ այն խրատը զոր կուտան Արաբացիք այս առակաւոր խօսքովս թէ « Ըղունկին ու մըսին մէջտեղը մի մաներ, կեղեւին ու ծառին մէջտեղը մի մտներ ». այսինքն ազգականաց կուիւներուն մի խաւնուիր որ խաղը չլինիս եւ կամ ի զուր չաշխատիս :

#### Ա. Ա. ՀԱՐԱԽՈՍԵԱԼՆ .

Առաքինիդ թէ եւ կըրնաս՝  
Հարկ չէ բընաւ որ զանաս  
Լըոեցընել քո թըշնամին  
Սաստիւ բընի կամ ուժգին.  
Գործըդ խօսի ազնիւ կերպով,  
Կըլըռէ չարըն շուտով.  
Գուցէ պարսաւն ալ գովութեան  
Փոխուի վաղ կամ անազան: